

ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՕՐԳԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՅԻՄՆՈՒՄՆԵՐ
ՆԻՑՊՈՒՄՆԵՐ

ԲԱՅՈՒՆԵՐ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ

„ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ“ օրաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԿԱՆ Է

1 ամիսը 3 ր. 3 ամիսը 21 ր.
2 ամիսը 15 ր. 4 ամիսը 25 ր.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՍԱՐԸ 50 ԿՈՊ.

Հասցեն՝ Тифлис, Головинский просп. № 25. Tiflis, Rédaction du journal «Jogovrdi Dzain» Телефонъ 10—99.

Սնրագրութիւնը բաց է ասեն or (բացի կիրակի եւ տոհմիկ) առաւօտեան ժամը 9—2-ը, խսկ գրասենեակը նսեւ երեկ. ժ. 6—8:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ

Տ Ո Ղ Ո Վ Տ Ե Ղ Ի Ն .

Առաջին երեսի վրայ 50 կոպ.
Վերջին երեսի վրայ 30 կոպ.

ԸՆԴՈՒՆԻՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԵՐՆԵՐ
ԳՈՒԼՊԱՆԵՐԻ,
ԺԱԿԵՏՆԵՐԻ
ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾՈՒԱԾՔՆԵՐԻ
Նոյն տեղը ծախուած են
— ՊԱՏՈՒՄՆԻ ԳՈՒԼՊԱՆԵՐ —
Դիմել միայն առաւօտեան ժամը
11-ից 4-ը: Բարեաւանակայա № 6,
Վերին յարկ: 10—5

Թիֆլիս, 22 հոկտեմբերի
ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԼԻԳԱՆ ԵՒ
ԻՆՏԵՐՆԱԹԻՈՆԱԼԸ

Անցեալ անգամ, խօսելով ժողովուրդների լիգայի գաղափարի մասին, մենք արդէն շեշտեցինք, որ այդ գաղափարը սերտ կապուած է պացիֆիստական շարժման հետ և այժմ նոր ոյժ է ստանում այն պատճառով, որ ասպարէզից հեռացում է այդ շարժման գլխաւոր խոչընդոտը, պրոսական միլիտարիզմը: Մենք տեսանք, որ Գերմանիան ոչ մի մասնակցութիւն չունէր խաղաղասիրական գործի մէջ, որովհետեւ նրա յառաջագէտ ասպարէզից անկողի շափաւորները, նրանք՝ որոնք ընդունում էին ազգային սկզբունքը և իրենց քաղաքական պրակտիկայի մէջ կանգնած էին գործնական հողի վրայ, չէին կարող պացիֆիզմին ոչ մի աջակցութիւն մատուցանել, բարոյապէս ճնշուած լինելով պրոսական բերրոկրատիայից, խիստ յեղափոխականները, նրանք որոնք ազատ էին այդ ճնշումից, այնուամենայնիւ հեռու էին խաղաղասիրական շարժումից և մինչև անգամ նրան թշնամաբար էին վերաբերում: Առաջի խմբին մենք վերաբերում ենք «կենտրոն» (Centrum) կոչուած կաթոլիկ կուսակցութիւնը, երկու ազատամիտ կուսակցութիւնները և գերմանական յառաջագէտ ինտելիգենցիայի այն խոշոր մասսան, որ երկրի քաղաքական ծանր պայմանները շտրկելու իրեն հեռու էր պահում կուսակցական և պարլամենտական կեանքից: Իսկ

երկրորդ խումբը կազմում է գերմանական սոցիալ-դեմոկրատիան: Առաջի հայեացքից կարող է տարօրինակ թուալ մեր պնդումը, թէ գերմանական սոցիալ-դեմոկրատիան թշնամաբար էր վերաբերում զէպի պացիֆիզմը: Չէ որ մինչև պատերազմը նա համարում էր կուլտուրական աշխարհի միջազգային գործունեւորից զրեթէ ամենաուժեղը, կազմելով սոցիալիստական ինտերնացիոնալի նախամարտիկ և ամենափայլուն խումբը: Չէ որ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիրները միևնոյն ժամանակ եղել են ինտերնացիոնալի ուսմիտները: Այո բոլորը, ի հարկէ, ճիշտ է, բայց իրողութիւն է և այն, որ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի այն հոսանքը, որ իշխող էր մինչև պատերազմը, միշտ թշնամաբար էր վերաբերում պացիֆիստական շարժման և ոչ մի աջակցութիւն ցոյց չէ տուել նրան, ընդհակառակը կուտել է նրա դէմ: Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, և անա թէ ինչու: Ինտերնացիոնալի հիմնադիրները, և գլխաւորապէս կարլ Մարքսը, որպէս հիմնական երակէտ իրենց աշխարհայեցողութեան, ընդունել են այն միտքը, թէ ազգութիւնը, որպէս գաղափար, ուրիշ բոլոր մարդկային բարոյական սպրուկների շարքին, ոչ ինչ է, եթէ ոչ արդիւնք, «հայելու արտացոլում» անտեսական փոխյարաբերութիւնների և դասակարգային կուտի, որ միակ իրողութիւնն է ամբողջ պատմութեան, իսկ պետութիւնը, որպէս կազմակերպութիւն, այդ կուտի միջոցներից մէկն է իշխող դասակարգի ձեւին: Այդ պատճառով, ուղղափառ սոցիալիստական ուսմունքի տեսակէտից, ինտերնացիոնալի նպատակը պիտի լինի ժողովրդական մասսայի ուղղից հեռացնել ազգութիւնը, որպէս բուրժուական նախապաշարմունք, իսկ պետութիւնը ոչնչացնել ու

րիշ բոլոր այն հիմնարկութիւնների հետ միասին (ընտանիքը և մասնաւոր սեփականութիւնը), որոնք հանդիսանում են միջոց իշխող դասակարգերի ձեւին՝ բանաւոր դասակարգը ըստըրկութեան մէջ պահելու համար: Ընդհակառակը, պացիֆիստական շարժումը ընդունում է և ազգութիւնը և պետութիւնը և միշտ ձգտել է կազմակերպել ժողովուրդների միութիւնը, յետևելով նրանց պէտ դասակարգման կերպով աշխատել է տարածել իր սպասարկութիւնների վրայ պիտի տարածել այն իրաւունք և ազատամիտ սկզբունքները, որոնց վրայ հիմնուած է այժման կուլտուրական պետութիւնների ներքին կեանքը: Ուրեմն, պացիֆիզմը չի ժխտում ազգութիւնն ու պետութիւնը, և ձգտելով կիրառել ազգերի եղբայրութեան գաղափարը՝ եխում է այն տեսակէտից, որ միջազգային փոխյարաբերութիւնների մէջ օրգանական միաւորը ազգն է, որը իր հերթին բարկացած է, որպէս օրգանիզմ, զանազան մասերից, դասակարգերից: Պարզ է, որ գերմանական սոցիալ-դեմոկրատիան, որ միշտ կանգնած է եղել ուղղափառ յեղափոխական սոցիալիզմի տեսակէտի վրայ, չէր կարող չբացաբարել պացիֆիզմի դէմ: Նա չէր կարող այլ կերպ վարուել, որպէս ինտերնացիոնալի անդամ: Չէ որ սոցիալիստական ինտերնացիոնալը, համոզուած լինելով, որ այժմեան մարդկային հասարակութեան օրգանական միաւորը դասակարգն է, և ոչ թէ ազգն ու պետութիւնը, և որ միակ միջոցը՝ միացնել ժողովուրդը դասակարգերի և նրանց հետ միասին պետութեան ոչնչացումն է, պիտի պայքարէր բոլոր այն հոսանքների հետ, որոնց երակէտն է ազգը և պետութիւնը:

Սոցիալիստական ինտերնացիոնալի և ժողովուրդների լիգայի գաղափարների մէջ ոչ մի կապ չկայ: Նրանք իրար հակասում են: Ինտերնացիոնալը չէզոքացնում է ազգութիւն, լիգան գալիս է ազգային ինքնուրոյնութեան ամենաուժեղ յետադարձ դառնալ: Այժմ գերմանական սոցիալ-դեմոկրատիան, որ արդէն ընդունել էր իր վրայ պատասխանատուութիւնը պատերազմի համար, յառաջարկում է Համաձայնութեան պետութիւններին հրաժարել ժողովուրդների լիգային: Իր այդ քայլով նա վերջ է դնում այն ինտերնացիոնալին, որի գաղափարը սրբութեամբ պահպանել է իր հիմնարկութեան օրից: ԿՈՒՆԸ ԹԱՆԳՈՒԹԵԱՆ ԴԵՄ I «Սակագներ» եւ նկողորդներ Թիֆլիսի քաղաքային պարենաւորման բաժանմունքը մօտ ժամանակներս հասարակել է նոր սակագների առաջին անհրաժեշտ միջոցների վրայ: Դրանցից մի քանիսը արժանի են հասարակութեան ասանձին ուշադրութեան այն տեսակէտից, որ նենց այդպիսի ցայտուն կերպով ընդարձակ այն մարդկանց ձեռքհասութիւնն ու լուստեղեակ լինելը, որոնք կուտում են մաշտակու թանկութեան դէմ, բայց այդ կերպը բնական էր այն կերպ չէին հասկանում, բայց եթէ սակագներ սահմանել: Դրանք կարողութիւն, մոխ և պաների սակագներ են. սակայն այդ մասին յետոյ կը խօսենք: Նոյն թոյլ ենք տալիս մեզ նկատելու, որ այդ ձեռք, այսինքն լոկ սակագներ սահմանելով, անկարելի էր զսպել վաճառողների թաւաբանը, Հասարակական ինքնավարութեանը, ի դէմս իր պարենաւորման բաժանմունքի, այդ ինչպիսի չպէտք է այդպիսի ձեռքի ընդմիջում: Նա պարտաւոր է մօտենալ հարցին լայն շափով. այն շափով և այն վճարահանութեամբ ու կուտուրով, որը պահանջում է կարիքը և մեր կեանքի տարբարայ բայտակի պայմանները: Իսկ հարցից և պայմանների պահանջում են լուրջ նկատութիւն նշանակել, որպէսզի սահմանուած

սակագները չխախտուեն. և արտակարգ միջոցներ ձեռք առնել, որպէսզի քաղաքի նկուղներում և պարենաներում ամբարտաւած միջոցները շուկայ դուրս հանուեն: Ոչ միայն այդպիսի քաղաքային պարենաւորման բաժանմունքը պէտք է պատշաճաւոր դիմումն անի ում հարկն է, որպէսզի սպեկուլանտների գնած միջոցները՝ գուտաններից արտահանուեն և քերուեն Թիֆլիսի շուկան կամ զէպի կարիք ունեցող քաղաքները: Դրա մէջ է կայանում քաղաքային ինքնավարութեան, ի դէմս նրա պարենաւորման բաժանմունքի, դիքը Թանկութեան դէմ մաքաւելու պայքարը: Մենք կամուտում ենք, որ այդ արգար ու հանրապետ գործում վրաց հասարակական կուտուրութեանը անն աշակցութիւն ցոյց կը տայ քաղաքային ինքնավարութեանը թէ քաղաքի սահմաններում, թէ քաղաքի սահմաններից դուրս «Ցատուկ օտրեւորը», որ կընուած է հակայեղափոխութեան և սպեկուլանտիայի դէմ մաքաւելու նպատակով, սակայն միայն Թիֆլիսի մէջ է որոնում հակայեղափոխականներ ու սպեկուլանտներ, փոխանակ իր ինտելեկտուալ ծառայելու, հասարակութեան մէջ վրդովմունք ու ցատուեն է տառջ իր իր հակայեղափոխական գործունէութեամբ: Սպեկուլանտիայի դէմ մաքաւելու պայքարը դնել Թիֆլիս քաղաքի սահմաններում պէտք է հանել նրա դարձանակութեան սփեկուլանտի և վերապահել միմիայն քաղաքային ինքնավարութեանը: Իսկ վերջինս ոչ թէ պէտք է վերապահել պարենաւորման կոմիտէին վարելու պայքար անտեսում կերպով, ինչպէս այս մի ամբողջ ասորին էր, երբ բարոյային քայքայուեց շուկայի վերահսկողութիւնը, այլ նա, քաղաքային վաճառութեան ամբիշտական կազմութիւն պէտք է ունենայ, պէտք է անձամբ գործը գործը: Դրա կամար քաղաքի ամենաանտեսական կեղտութիւնը, որ յանձնուած էր պարենաւորման բաժանմունքին, պէտք է խիստ ծանր և ծանր շաղկապել թաղային սոցիալների գործունէութեանը, ինչպէս ասում էր: Թէ ինչ ոչնչով նսայնց նախկին առաւարտ-անտեսական կազմին այժմուայ դեմոկրատիկ դուստն, թէ ինչ շարժառիթներից դրդուած այդ կազմը՝ հակադրութիւնը յանձնուեց պարենաւորման բաժանմունքին, դա այլ ևս հասարակական չէ. սրբիկտեա պարենաւորման բաժանի ձեռքում այդ կազմութիւնը

փաստօրէն դերոյի հասաւ և այն կողմը, որ ասորիներէ ընթացեալ մաքառում էր թանգուլիան ու պարենաւորման անարելիայի դէմ, այս կարճատե փաստակամիջոցում ոչ միայն դիակ էր ներկայացնում իր տեսից, այլև մի շարք յանցագործներ տուեց: Իրանցից չորսը, լրագրողները ասելով, արդէն դատի են ներթափանցում...

Եթէ նախկին կազմը անհամապատասխան էր իր կոչման, դեմոկրատիկ դուռնայի ներկայացուցիչները պէտք է վերակազմութեան ենթարկէին նրան, այլ ոչ թէ հեռացնէին իրենց շրջից:

Մեր կարծիքով, քաղաքային թաղային ազնետները, իրենց երկարամտայն փորձառութեամբ, արդէն կազմակերպուած ու որոշ հունի մէջ մտքած տեսիլներով և նպատակներով կարող էին ահաբեկ և բեղաւոր գործունէութիւն մտցնել այդ կարգում և աւելի օգտակար, բան երբ և իցէ արեւ է պարենաւորման բաժանմունքը: Իսկ վերջինս շատ յաճախ իր այս կամ այն քայլերով ու կարողութեամբ իրենց շրջանի ղեկավարները և թաղային ազնետները դործունէութիւնը պարենաւորման հարցի և թանգուլիան դէմ մաքառելու շրջանում:

Ասան հաստատելու համար կը բերեմ մի կոնկրետ փաստ մերձաւոր փաստակազմումնայն ատու:

Մի երկու շաբաթ արանից առաջ Վիննի պաղտօմի մօտ թաղամասի առեւտրատեսակաւ հակողութիւնը բռնում է մի քանի Ֆուրգոն կարտոֆիլ: Հետախուզումը երևան է հանում այդ շրջանում մի ամբողջ պահեստ լի կարտոֆիլով, որը պատահանում է անգղիական վաճառականներին մէկին: Այդ այն միջոցին, երբ շուկայում կարտոֆիլ ամենաինչ կայ: Թաղամասի ազնետը իսկոյն կը ընտել և պահեստը և այդ մասին անգղիական պարենաւորման բաժանմունքին:

Վերջինս իր կողմից կարգադրում է կիւրք պոկել և թոյլ տալ պահեստատիրոջը շաբաթակալու իր «ազատ առեւտրը»:

Չեմ կարծում, որ ունէ մէկը դէմ լինի ադատ առեւտրի: Բայց ներկայ դէպքում բան է նրանում է, որ պահեստատէրը էֆան առածը շուկայ չէ հանում ազգաբնակչութեան կարիքը բաւարարելու համար, այլ ամբարում է, որպէսզի յետոյ մէկին-երկու ժամի: Իսկ ժողովուրդը ստիպուած է պատահածը գնել հրէշաւոր գներով:

Սա արդէն ազատ առեւտր չէ, այլ սպիկուլիացիոյ, այն էլ հովանաւորութեամբ ձեռի:

Այս դէպքում նկատուած է մի ամբողջական երևոյթ էլ. այն միջոցին, երբ այդպիսի փոփոխական վերաբերմունք կայ դէպի պահեստատէրերը, ամեն տեսակի արգելքներ և հալածանքներ են յարուցուած շրջիկ մտերմականների դէմ, ստիպուած են նրանց սակազնով ծախել և այլն: Չքանոսանքը որ մասնաւոր շրջիկ ձեռքերից է ազգաբնակչութիւնը աւելի էֆան գրնում մթերքները, քան շուկայում: Մինչդեռ հակողութեան սյօք կենտրոնացած է գարձեալ գրանց վրայ:

Այս ձեռք «ազատ առեւտրը» պարենաւորման բաժանմունքի ըմբռնողութեամբ:

Ի՞նչպիսիք միջոցներով միշտ էլ ստուգուած են թոյլերը թանգուլիան դէմ սկսուած պայքարում շրջիկ և մանր առեւտրականները ստուգուած են ու հալածուած, իսկ ուժեղները ներկայացնում են չարիքի բուն աղբիւրը, միշտ էլ վրիպում են պատասխանատուութիւնից և շարունակուած իշխել շուկայի վրայ:

Փոխանակ ստիպելու պահեստ ունեցողներին շուկայ հանել ամբարումը, փոխանակ կօսակրատու-

ների միջոցով բաւարարելու ժողովրդի ամենօրեայ կարիքները, պարենաւորման բաժանմունքը առաջ քշելով նման ձեռք «ազատ առեւտրը», հնարաւորութիւն է տալիս պահեստատէրերին սպիկուլիացիան ուժեղացնելու: Եւ այդ անուժ է այն մարմինը, որը կոչուած է թանգուլիան և սպիկուլիացիայի դէմ մաքառելու:

Պէտք է ստեղծել այնպիսի պայմաններ, որպէս զի քաղաք մասով մթերքները շուկայ դուրս բերուեն ամենայն օր և վաճառուեն սահմանուած գներով, և, այն էլ ոչ թէ մի կամ երկու տեղում, այլ քաղաքի բոլոր մասերում որոշ բաշխումով, միտոտեսակ գներով:

Եթէ պարենաւորման բաժանմունքը ձեռնառն գտնուել այդ աշխատանքը կատարել երկաթուղային կայարանում, եթէ նա կարողանայ հենց այնտեղ պարտիաներով բաժանել մանրածառանների վրայ, թերևս կարելի լինի կարիքը բաւականաչափ մեղմել և օրըստօրէ բարձրացող գների առաջն տանել:

Պարբերաբար ստանալով տեղեկութիւններ գների մասին այն վայրերից, որտեղից բերում են մթերքները, կարելի է սահմանել շուկայի համար համապատասխան գներ:

Միայն այդ ձևով սակագները կունենան իրական արժէք և կը պահպանեն իրենց կանոնաւորող գորութիւնը:

Բայց դա չէ նշանակում թէ հրակողութիւնը դրանով ինքնին կը վերանայ, նա մեր իրականութեան մէջ գեռ երկար կը շարունակի իր առաջնակարգ դերը, մինչև որ մեր առեւտրական դասի մէջ ըմբռնումների և անորոշակի յեղաշրջումը կը կատարուի, մինչև որ կը ստեղծուեն առեւտրի համար այն պայմանները, որոնք հասկանալի կը դարձնեն թէ վաճառողի համար և թէ ազատողի համար բարիխղճութեան և արդարութեան օրինակաւ չափը:

Անլայս

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մենք ստացել ենք Բագուի «Каспий» թերթի մի շաբթ համարները, սկսած առճիկ զօրքի քաղաք մտնելու օրուանից: Թերթի մէջ աշխատակցում են խմբագրութեան հին անդամները, Ա. Վեյրերը և Մ. Գլախինսկուրը (Ի. Գլախինսկուրը), իսկ ստորագրում է թերթը այժմ Կարաբէկ Կարաբէկյանը (բժ. Կարաբէկյան):

Այն, ինչ «Каспий»-ն գրում էր ծղովկոսի լեզուով մինչև մարտ ամսի դէպքերը, որոնցից յետոյ նա փակուեց բողոքիկների կարգադրութեամբ, այժմ նա արտայայտուած է բացի ի բաց: Ողջունելով տաճիկների գալուստը Բագու, թաղիկի թերթը մի շաբթ առաջնորդութեամբ դիկարացիայի ձեռով յայտարարում է, որ նրա նպատակն է ստարածել մասնագրական աշխարհի միութեան գաղափարը: Աչքի է ընկնում, որ այդ թերթը, որ միշտ զիջողաբար էր վերաբերում դէպի Ռուսաստանի ծայրայիղ սոցիալիստական հոսանքները և նրանց հետ շարունակ կոկիտութիւն էր անում, այժմ նրա էջերը լի են ամենատուր հարուածներով և հայտնաբերող սոցիալիստների հասցէին:

Ուշագրութեան արժանի է նաև այն, որ թերթը ամեն մի համարում իր բոլոր յօդուածներում աշխատում է ստեղծել ընթերցողների մէջ «լաւ արամագրութիւն»: Փախուստի ձգտման մասին, որով բռնուած է քաղաքի ազգաբնակչութիւնը, մի ֆեիլիտոնի մէջ Անդրէյ Վ. Ն. ասում է.

«Հոգեկան վարակիչ հիւանդութիւն է այս, պէտք է հոգեբոյժի դիմել: Այդ հիւանդութեան պատճառը հասկանալի է. մեր անց

կացրած բարոյապէս և ֆիզիքապէս ծանր կեանքը վերջին վեց ամիսներում չէր կարող չազդել մեր հոգեբանութեան վրայ: Այս հոգեկան համաճարակը անհրաժեշտ է կանգնեցնել, որովհետև ձրիակերների և անպէտքների հետ միասին փախչում են մեր երկրի համար պէտանի և օգտակար սյօքեր:

Պէտք է որևէ կերպ զբաղեցնել այդ փախչողներին, մի գործ, մի զբաղմունք տալ սթափեցնելու համար: Բացի շատ և շատ թատրոններ, դրամներ, կրիստալապարկներ, ժողովներ, դասասխտութիւններ, զբոսանքներ, թող հին ընկերութիւնները վերականգնել իրենց գործունէութիւնը, թող բացուեն նորերը—բոլորի համար գործ կը գտնուի. թող երգեն, նուագեն, կարգաք, զբօսեն, թող թէկուզ վրձն ու կուրեն, միայն թէ հիւանդը մունջ չստի կողպած սնդուկի վրայ, աչքերը պատմել չուած փախչելու ժամին սպասելով: Կարծեցեալ մեռածներին կեանքի բերելու համար արուեստական շնչառութիւն են կազմում, աշխատում են մարմինը շիկով վերականգնել արեան շրջանառութիւնը: Նոյնը պէտք է անել և այստեղ: Ցնցեցէք, սթափեցէք հիւանդին, մինչև որ կենսական սյօքը, որ վեցամսեայ իրարանցումի ուժեղացումը անհամարժեքում է նորից իր գործը կատարէ»:

Մի ուրիշ յօդուածում թերթը գանգատում է, որ հասարակութիւնը չի դուրս գալիս ապտիայից:

«Շարժել մեր կոտակարութեան վերաբերան իշխանութեան վրայ առած եռանդուն միջոցառումը քաղաքում արդէն վերաբերեց մեզ և կատարեալ կարգ, զի կատարեալ պիտական և հասարակութեան կրիստալները գործի վրին: Միայն ցաւալի է, որ չէ կատարուած մեծ կենդանութիւն և հասարակութեան կողմից կարող զգնելու կառավարութեան: Կառավարութիւնը անում է ամեն բան, ինչ որ կարուած է իրենից, որպէս զի բարեւալէ հասարակութեան դրութիւնը, որ տանջուած էր անցեալ ամիսների ծանր ուժեղից: Կառավարութիւնը ընդառաջ է գնում հասարակութեան ամեն մի նախաձեռնութեան, որ կարող է քաղաքում և արդիւնատեղերում վերականգնանցնել նախկին արդէնաբերութիւնը, առեւտրը, կուլտուրական և լուսաւորական հիմնարկութիւնները և քաղաքի կեանքի մէջ նորոգութեան և եռանդի կենդանարար հոսանք մտցնել: Այն ինչ քաղաքացիք, սակաւ բացառութիւններով, կարծես դեռ չեն կարող իրենցից թօթափել այն քնափութիւնն ու անարեկութիւնը, որ նրանց ազդել էր բռնացի շարաքսատիկ ազատութիւնը: Նոյն անգործունէութիւնը նկատուած է նաև քաղաքային դուռնայի գործիչների մէջ»:

Ընդհանրապէս, թերթի տոնը լաւ է, նա անընդհատ հրաւիրում է բոլոր ազգութիւններին մոռանալ թշնամութիւնը և դիմել շինարարական գործունէութեան: Սակայն յօդուածների շարքում բացառութիւն է կազմում մէկը, սպուած է № 62 «К.» ստորագրութեամբ «К моменту» վերնագրի տակ: Այդ յօդուածը լի է այնպիսի զրպարութիւններով և հայտնաբերողով և կեղտոտ նկատողութիւններով հայ ժողովրդի հասցէին, որ մենք ստիպուած ենք բաւականաչափ միայն մեր բողոքով, խնայելով մեր ընթերցողների դիրքագացութիւնը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ

Բաթումից հաղորդում են մեզ. «Պոլսից ստացած տեղեկութիւններից երևում է, որ Պոլսի յեղաշրջումն եղել է հետևանք այն ներքին կռուի, որ սկսուել է երկու քաղաքական հոսանքների մէջ. մէկ հոսանքի գլուխ անցել էին նոր սուլթանը և նրա թագաժառանգը, իսկ միւսի գլուխ անցած էին էնկեր և թալաթ փաշաները: Յաղթութիւնը տարել են առաջինները. ասում են, էնկերը վիրաւորուած է, իսկ թալաթը սպանուած: Դաշնակից պետութիւնները այս ամսի 17-ին ուլտիմատիւ կերպով պահանջել են տաճկաց կառավարութիւնից վեց օրուայ ընթացքում բաց անել Դարդանիլը և հեռացնել Պոլսից գերմանական զօրամասերը: Տաճկաց նոր կառավարութիւնը տրամադիր է կատարել այդ պահանջը:

Նոր կառավարութեան մէջ ընդունուել է և մէկ հայ նախարար:

Էսազ փաշան և միւս փաշաները հեռացել են Բաթումից. այստեղ այժմ գլխաւոր իշխանաւորը նահանգապետն է. զօրքերը արագ կերպով գնում են Տրապիզոնի ուղղութեամբ:

Բաթումը, բառիս բուն նշանակութեամբ, թալանուած է. տաճիկները ամեն բան տներից տանում են, մինչև անգամ գուները բանալիները: Այստեղ խօսուած է, որ տաճիկները կը հեռանան մինչև 1917 թ. սահմանները և Բաթումն էլ շուտ կը յանձնուի վրացիներին:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Վ. Հ. Գ.)

ՄՈՍԿՈՒՄ, 19 հոկտ.—Վինննայից հաղորդում են, թէ Միտիլնում տեղի ունին բանակցութիւններ թիւրքիայի և անգլո-ֆրանսիացիների մէջ: Դաշնակիցների նաւատորմին թոյլ պէտք է արուի Դարդանիլով անցնել:

Ամերիկայից հաղորդում են. Նախագահ Վիլսոնը Աւստրիային առաջարկում է անջատ հաշտութիւն:

Կիեւի.—Ռուսաստանի սահմանակից գերմանական զօրքերը 10 վերստ հեռանում են դէպի Ուկրաինայի խորքերը: Ուկրաինայի կառավարութեան հարցին պատասխանելով Ամերիկան յայտնեց, թէ հաշտութեան կոնգրէսում Ամերիկան ցանկանում է տեսնել ամբողջ Ռուսաստանը:

Գերմանական մամուլի հաղորդագրութիւն, 19 հոկտ.

Բաւարիայի պարլամենտում միտիտար-նախագահը աւեց զեկուցում, որում ի միջի այլոց ասաց. «Մենք հեղեղի ենք, որ գերմանական ժողովրդի լայն խաւերը Վիլսոնի հաշտութեան ծրագիրը նկատում են իրեն հրաժարումն այն բոլոր յայտերից ու ցանկութիւններից, որոնք մեզ թուած էին անդրադուլի պայման Գերմանիայի սպազայ փայլուն կեանքի համար: Հակառակորդի գերազանցութիւնը սպառ-

նում է Գերմանիայի դուրսբերան և ազատութեանը: Եթէ Գերմանիան Վիլսոնի յայտարարութեան հարցերի պատասխանելի ճան չի գտնում, այդ այն պատճառով էր, որ նա սպառնալիքներ ունէր Վիլսոնից, որ Վիլսոնը հաւատարմի կըլնայ այն սկզբունքներին, որ քանիցս անգամ յայտարարել էր և ասել, թէ անգղապէտք է նրանց հետեւի: Գերմանիան յոյս ունէր, թէ առաջիկայ հաշտութիւնը պէտք է լինի ժողովուրդների հաշտութիւն, արդարութեան վրայ հիմնուած. այդ հաշտութիւնը պէտք է լինի մշտական: Իսկ այնպիսի մի հաշտութիւն, որով մի պազի արժանապատուութիւնը պէտք է վերաւորուի, որով մի ժողովուրդը պէտք է ենթարկուի մի ուրիշի լծին և իր ապագան վտանգի տակ ձգէ—այսպիսի հաշտութիւն չէ կարող ընդունել որևէ մեծ ազգ: Եթէ մեզ այնպիսի պայմաններ առաւարկեն, որոնք անպատուութիւն են բերում մեր ազգային կեանքին՝ ևս հաւատացած եմ, որ Գերմանիայում կը պայթի զայրոյթի զգացում և ազգային ոգեւորութեան ու լուրջ վճռի մի ցոյց կը լինի, ինչ որ տեղի ունեցաւ 1914 թուին: Ոչ գերման ժողովուրդը և ոչ նրա բանակը այնքան չեն թուլացած, որ թոյլ տան որևէ մէկին իրեն հպատակեցնել: Բոլոր ոյժերը մինչև վերջին մարզը նորից ի մի կը խմբուէին և մի միակ վճռի կը յանդէս—պաշտպանել հայրենիքը ամօթից և աւերումից: Այս է անդառնալի կամքը 67 միլիոնաւոր ազգի:

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ

ԲԵՐԼԻՆ, 19 հոկտ.—Արևմտեան ճակատ: Բրիւզզէի և Լիսի միջև մենք յետ վանեցինք թշնամու բաղամթիւ յարձակումները: Գորսիկից հիւսիս-արեւելք մենք յետ մղեցինք թշնամու գործառնքը, որոնք զբաւուած էին Սաարի աջ ափին: Լիլից և Դուէլից արեւելք թշնամին երեկ առաջացաւ մինչև Ասի-Տամպլուզ-Ֆրիմ-Մարկէտ գիծը: Լը-Կասաօի և Ուազի միջև շարունակուեցին թշնամու ուժեղ յարձակումները: Լը-Կասաօից հարաւ-արեւելք թըշնամին ճեղքելով մեր ճակատը հասաւ մինչև Բագուէլ, իսկ անտառով մինչև Վասսիների հարաւային ծայրը: Բագուէլը գրոհով նորից առնուած է: Երեկոյեան ժամերին և գիշերը մենք այնտեղ մեր գրծերը յետ տարանք, թշնամուն հեռացնելով: Էն գետի վրայ թշնամին շարունակեց յարձակումները մինչև Չլլիցի և Գրան-Պրէ և աւելի հեռուն, Վոլիէրից հիւսիս, մինչև Յոնս-Վանսէյ և Յալէզ: Թշնամին հաստատա կանգնեց Էնի աջ ափի վրայ:

ՊԱՐԻՉ, 19 հոկտ.—Ուազի ճակատում գերմանացիք յետ են չարտաւուած Ուազից դէպի արեւելք: Յըբանսիական զօրքերը սահման ունին ջրանցքը Ուազից մինչև Օտ-Վիլլ և գրաւեցին Էտրէօ և Վէնետալ գիւղերը: Այստեղ առաջին բանակը, շարունակելով թշնամուն հալածել, Ուազի և լա-Պէտի միջև, այսօր նոր յաղթութիւններ ձեռք բերեց: Բիտէ-ժուաք և Վիլլէր-Լը-Սէկի տիրապետող զիջեցրը անցան Փրանսիացոց ձեռքը, հնայելով թշնամու սաստիկ զոդացիային կրակին: Աւելի հեռուն դէպի արեւելք Փրանսիացիք անցան Ֆէլ-Լը-Մուսոն և Կուտիլոն-գիւ-Տամբը: Սէրրի ճակատում Փրանսիական զօրքերը այս տոտուօս գրոհ ուրի Գունսլինգ զիջեց վրայ: Պոլսի շրջանի և Միսոնի ճահիճները միջև, 5 կիլոմետր երկարութեամբ: Գիւրքը չափազանց ուժեղ էր: Յըբանսիացիք զիջեց պատուեցին և ներս թուծեցին 1200 մետր խորութեամբ: Վէրնէյլ գիւղը և

տանհաների վրայ, մասնաւորապէս հայերի վրայ:

Թիւրք պրոպագանդիստները, զոր- գոյնները ամենուրեք հրաւեր էին կարգում ընդհանր անկ զեաւուր, փաստաւոր, բարձր չարեաց արմատը եղող հայ ժողովուրդին...

Սիւսեցի մահն քայլափոխում կո- տորի, սպանել, թալանել, հար- սատարել, ճնշել հայերին, որը ցերեկով աները մտնել և սրբել- տանել ամեն բան...

Զաքարիայի շրջանին մօտ գրա- նուած Նուբու գաւառի Սարաթու հայաբնակ հարուստ գիւղը, որը քաղկացած էր մօտ 350 անից, հիմնուիք քարուքանդ եղաւ ընտելիներին սրի քաշեցին ան- խտրել... Զարհուրելի ոճիրներ կա- տարուեցին թէ այդ գիւղում և թէ շրջանին հայերի վերաբերմամբ:

Քաղաքի թիւրք կամենդանս Ալի-Ալիա-էրզին էֆենդին Զաքա- թայայի հայոց քահանային, Տէր- Մկրտիչ Տէր-Մկրտչեանին, երկու ասկերաններով անից դուրս տանե- լով կառքով ասանում է Գանձակի, իբր թէ Նուբու-ֆարաջի պահանջով Սահայն մի վերստայով նա ճամբին իր ձեռքով զնդակաւորում է տէր հօրը... միւս վերստայով տէր հօրը կիսով չափ թաղել են կենդանի և նախ լեցնելով վրձով՝ աչքի են: Երբորդ վերստայով նրան կախել Սարաթուի հայոց եկեղեցում և առաջ գիւղից կար-կտոր անելով զէս ու զէն շարժել...

Մի բան միայն պարզ է մեզ հա- մար, որ զժողով զոհի գեղացի մի- նչ օրս չգտնուեց և յանցաւորները մնացին անպատիժ, որոնք շարու- ճակում են իրենց սխրագործու- թիւնները...

Հայերի վերաբերմամբ իրենց դործը մասամբ իւրք վերջացնե- լուց յետոյ՝ թիւրքերը սկսեցին ի- բենց անգթութիւնները անդաւան թուրք արեւմտիկներին նկատմամբ: Զօրք հաւաքելուց յետոյ սկսեցին բարձր թուրքերի ունեցած-չունե- ցածը կրկն իրենց ամբարները, պա- հեսաները՝ ստակալի, ծանրատար սուրբեր սահմանելով զօրքերի պահ- պահութեան համար: Օրովհան 1000 փութ միայն ձրի ալիք ստանալով ժողովուրդից, պահանջել զգաւթաթ մուրքը յօգուտ զօրքի պահպանու- թեան:

Թուրք ժողովուրդը երկու ոտքով բնկած էր նկայ ծուղակի մէջ, որ ից դուրս գալու ոչ մի հնարաւո- ռութիւն չուէր, եթէ միայն վեր- ջին յազթութիւնները չհայտն իրեն յոյս ներշնչելու:

Ժողովուրդը չէ հաւաքում, ամ- բարում իր բեքը, կողմն ու ըն- կողը, շահանակն ու ուրիշ աշխա- նային պատգանբը, միւրքը երկրի վրայով, որ իր գլխին պէտք խփեն, ստանն զօրքի համար: Նա աւելի բարեւոք է համարում, որ թափուեն փշուսան, քան թէ թալանն տա- նեն:

Այս ատրի աշխատային վար ու- ցանք էլ չի արել, որ գալ տարի թիւրքերը չխլին տանն:

«Լաւ է ուշ քան երբէք»... Այժմ ուշիկ են եկել և բազմեցրել համա- րում են, երբ թիւրքերը կը մաք- րեն իրենց երկիրը...

Հմ. Կիւսիսեան

Շ Ո Ւ Շ Ո Ւ Ս

Շուշուց եկած մի տիանա- տես պատմում է, որ թիւրքե- րը քաղաքը մտնելով, ոչ կողո- պուտ և ոչ կտորած տեղի չէ ունեցել: Ընդհակառակը թիւր- քերը կախել են մի քանի տե- ղական թուրք կողոպտիչներ: Քաղաքում հաստատուած են երկու կախազաններ, մէկը հա-

յոց, միւսը թուրքաց թաղե- րում: Հայոց թաղում կախում են թուրք յանցաւորներին, թուր- քաց թաղում՝ հայ յանցաւորնե- րին:

Թիւրք զօրքերը ձերբակալել են տեղական հետեւեալ հայ ին- տելիգենտ գործիչներին: Տիգ- րան Բէդիազար-Իւզրաշեանին, Եղիշէ Իշխանեանին, Ասօ Յով- հաննիսեանին, Անն Վարդա- պետեանին, Մանդինեանին, Յ. Իսախանեանին, Մարտի Այվազ- եանին, Մելիքսեթ Յասյանին, Իլիա Մելիք-Շահնազարեանին, Արտաշէս Վարդապետեանին, Ա- րստամեանին, Ռուբէն Գաս- պարեանին, Գուրգէն Օհանեա- նին, Աշոտ Մելիք-Յովսէփեա- նին, Արշաւեր Բամալեանին, Հայրապետ Մուսայէլեանին և Աւետիս Յովհաննիսեանին:

ԼԻԹՅԱԼԻ ԲԷԿ ԲԷՐՈՒԹՈՒԸ

Ինչպէս հարգում է «Kav- kazsk. Slovo»-ն, Շուշում ըս- պանուած է յայտնի գործիչ Լիւթֆալի բէկ Բէրութովը: Սպանողը թուրք է:

ՊՈԼԻՍԸ ԴԱՇՆԱԿԻՅՆԵՐԻ ՁԵՈՒՓԻՆ

Թիֆլիսում լուրեր են ստա- ցուած, որ գաշնակիցները գրա- լել են Կ. Պոլսը:

ԲԱԳՈՒԻ ԱՆՑՔԵՐԸ

Գր. Այլովի գաւառապետի մասին

Կիրակի, հոկտեմբերի 20-ին, Ժո- ղովրդական Տան գահի ինում Գր. Այլովի (մեծիկի) Բագուի գոր- ծադիր կոմիտէի անդամ, դասա- թուց Բագուի անցքերի մասին:

Գահեղնելով սկզբում մարտի անց- քերի վրայ դասաթուց կարուկ գծերով ճոյղ տուեց, որ միայն և պրոպագանդան են այն լուրերը, որոնց հիման վրայ ստեղծուել է այն կարծիքը, թէ Բագուի անց- քերը հայ-թուրքական ընդհարումի բնոյթ են կրել:

Այնուհետև անցնելով ընդհանրե- րի ամբողջ կառավարութեան գոր- ծունէութեանը, դասաթուցը բնորոշ գծերով նկարագրում է այն անըն- լանասիտ զրուցիւնը և այն խոր- դախ քաղաքականութիւնը, որոնց ծանր մթնոլորտի մէջ տփուներ ապրում էր Բագուն:

Նա յիշեցնում է ժողովականե- րին այն պատճառ քայլերի մասին, որոնք կործանում էին Բագուի ճա- կատը թէ սկզբից և թէ վերջին ժամանակները, և որոնք անգլիա- ցիներին գալու օրերին հասցրին զօրքերի կազմալուծումը վերին ու- տիճանի: Մանօթացնելով ունկըն- դիբներին ծովային և գիւնուորա- կան կոմիտայ պրոպագանդի կար- գանովի, պոլիպիլի Պետրովի, պա- րենաւորման գործի կառավարիչ Յիբուլսկու գործունէութեան նկա՝ դասաթուցը ցոյց է տալիս, թէ որ- տեղից էին դուրս գալիս անընթա- նութեան և ներքին կազմալուծման հասկերը պաշարուած Բագուն:

Արձանագրելով ընդհանրեցնելի հրուերի ինչ և նրանց փախուստը, որի ժամանակ նրանք տաքան իրենց հետ անապին քանակու- թեամբ ալիք, շարք, զենք պա- շարուած քաղաքից և 15 միլիոն աւերի փող, նախկառու է Բա- գուի բոլոր անցուղարձի օգրք- գրական զրուցիւնը, երբ սովի և սարսափի մասնուած քաղաքին

վերջին բողէին այսպիսի մտայու- վէրք հասցրին նրա նախկին ա- թերը:

Այնուհետև անցնելով քաղաքի գրութեանը անգլիացիներին գալուց յետոյ՝ դասաթուցը ասում է, որ վերջիններս նենց սկզբից յայտ- նեցին, որ ներքին գործերի մէջ նրանք չեն խառնուելու: Ընդհա- պէս այսպէս էլ եղաւ: Բայց նախ- կին ունիթանութիւնը պրոքնաւոր- ման գրութիւնը հասցրել էր այն ողբերգական վիճակին, որ ասանց կողմնակի օգնութեան տեղական իշխանութիւնը ոչինչ չէր կարող անել:

Ճակատուած էլ, չնայած անգլիա- ցիներին զերմարդկային ջանքերի՝ ոչինչ չկարողացան անել, որովհե- տեւ մինչև նրանց գալը զօրքերը արդէն լքուել էին բոլշևիկական քրոպազանդայի շնորհիւ: Եւ այս- պիսով կատարուեց կատասարֆան և Արքեւշանի և տանիկ զօրքը մտաւ քաղաք: Արքեւշանի կառա- վարութիւնը ոչ մի միջոց չէր առել զսպի գաղտնացած ամբարի կրքե- րը և բնագոյնեքի արտայայտու- թիւնը և երեք օրուայ ընթացքում քաղաքը մասնուած էր թալանի և սուկալի կատարածի:

Դասաթուցը ընդգծում է այն հան- դամանքը, որ այդ սարսափելի կո- տորածի ժամանակ թիւրք իշխա- նութիւնը և թիւրք ինտելիգենցիան ոչ մի միջոց չեն շարու առելու: Եւ այն ինչ մասին ընդհարումի ժամա- նակ հայկական հիմնարկութիւնները և հայերն ընդհանրապէս փրկել էին մեծ քանակութեամբ թուրքերը, պատասխարելով նրանց իրենց մօտ և այդ պատճառով էլ այս բոլոր ցաւալի անցուղարձի պատասխա- տանութիւնն ընկնում է թիւրք իշխանութեան և ինտելիգենցիայի վրայ:

Զեկուցումը դասաթուցը զուրս բեքից յետոյ սկզբնաւորւցիւն:

Վերջում դասաթուցը քաղաքի ժամա- նակաւոր դերը Ու կոմիտէի ան- դամ Այլովի շնորհակալուցումը, մենք, թիֆլիսի քաղաքացիներս, արտա- յայտում ենք որ խոր երկրպագու- թիւնը Բագուի պրոպագանդիկ նե- րուս գործի մեծութեան ունեց, յար գանք ենք մտանցանում ճակատում ընկածներին և քաղաքում պա- նուածներին, խորապէս պայտջի ենք յայտնում այն գաղանտիան կտորածի համար, որ քաղաքում կազմակերպեցին խաղաղ ազգայնա- կութեան դեմ արքեւշանիցի-թիւրք վճռադատները, և անարգանքի գործը ենք դնում այդ գաղանտութիւնների կազմակերպողների թոյլարողների ճակատին: Յոյս ենք տածում, որ զրուելի պրոպագանդան, որ գրգռում էր ազգամիջեան տանութիւնը թիւրքական իմպրեսալիզմի օգտին՝ չի խանդարի բարձր մահնեղական և քրիստոնէայ դեմակրատային միտնալ խաղաղ աշխատանքի և յեղափոխութեան նաւաճութեքի ամ- րապնդման համար:

ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Շարաթ երկելոյ, հոկտ. 19-ին, Ազգապարտիան Ընկերութեան շինու- թեան մէջ, ընկերութեան նախա- ձեռնութեամբ տեղի ունեցաւ զրա- կան երկելոյ նուիրում հանգուցեալ Գալուստ Տէր-Մկրտչեանի (Թիւ- րքոնի) յիշատակին: Երկելոյից հրաւերուած էր հանգուցեալի եղ- րայրը, թիւսի առաջնորդ Միլիթոսը կախկողոսը. եկել էին և բաւական թուով յարգողներ:

Երկելոյից բացուեց «Յարժամ մացնս ի սուրբ սեղանն» մեղեդիով և Բէթովիկի Ագոյ մարտի նուագով: Որից յետոյ Մա. Մալխասեանցը, Ընկերութեան վարչութեան հրուե-

րով, դասաթուցը հանգուցեալ բա- նասերի գիտական գործունէութեան և աշխատասիրութիւնների մասին, նախապէս տարով մի քանի կեն- սագրական տեղեկութիւններ և յի- շողութիւններ: Դասաթուցութեան վերջում, որ տեղից 1 և կէս ժամ, դասաթուցը յայտնեց, որ հանգու- ցեալին յաջողուել է գտնել Շա- պուհ Բագրատունու մինչև այժմ կորած համարուած պատմու- թիւնը, որի միակ ձեռագրից հան- քուցեալը արտագրել է մի նոր օրի- նակ, որ յանձնուած է Յուսէփ արք- եակախկողոսին ի պահպանութիւն:

Դասաթուցը ցանկութիւն յայտ- նեց, որ Ազգապարտիան Ընկերու- թիւնը յանձն առնէ ի մի հաւա- քել և ամբողջութեամբ մի հատա- ռով հրատարակել հանգուցեալի մո- նագրաֆիական բոլոր աշխատու- թիւնները, որոնք ցրուած են մեծ մասամբ «Անարատ» էջերում և այլ հանդէպներում, որպէսզի մաս- չիլի լինին բանաւէրներին:

Ք Ր Ո Ն Ի Կ Ո Ն

Վրաց կառավարութեան նախա- գահը ստացել է զբաւանդում գնաց- քից Կեռեհալ հետագիրքը: Ընկառե- րի 20-ին 15 ժամին կհայ Սա- նահին և հանգամանքները պարզե- լուց յետոյ գնացի զբաւանդում գնաց- քի հետ զէպի մեք անբերթարայի ստանձնել: Դեքիգուայի կամուրջի վրայ Կորեթի հաւաքեցանքի միջև հայկական զօրամասերը գրաւել էին մեք անբերթարային: Ներկայացրի բարձրագույնը, որը նրանք թել տասանակուց ընդունեցին: Ստե- մանի վրայ կանգնեցրի եմ մեր պահանջները ձեք ցուցմունքի հա- մաձայն:

Թիֆլիս է ժամանել զբաթ Շուշեցուրդը:

Ներկէ ժամը 12-ին հայոցաւ զօրատես վրաց զօրամասերի մի զօրանքի մտնելի, որոնք դառնում են թիֆլիսում: Զօրատեսին կառավա- րան քում զեն.-էլիանտն Մազնիլը:

Հոկտ. 20-ին երեկ. ժ. 5-ին տեղի ունեցաւ Ա. Շահաթիւնեանի տեղի յուղափոխութիւնը: Թափօքը անցաւ Գոլիցիյակոյա, Գուշիկնակոյա փողոցներով և Երե- ւանեան հրապարակով Դուրջուս- կոյա և Գոլովիկնակոյա պրոպագա- րով իջաւ զէպի Բաքաթիսիսի փո- ղոց և կանց առաւ «Հորիզոն»-ի խմբագրութեան առաջ: Թեանց պ. Վ. Թորէնին:

Քաղաքից եկող մի անձնաւո- րութիւն հերքում է Շահուսեանի և Զափարիձէի հրաքանազարկու- թեան լուրը: Յիշալ անձը ա- սում է, որ երկուսին էլ նա տեսել է Աստրախանի մի հիւրանոցում:

Վրաց Կորմիք Յաչի ընկե- րութիւնը դիմել է վրաց կառավա- րութեան և ինչպէս է 50,000 ոտք. ընկերութեան պէտքերի համար: Կառավարութիւնը մերժել է:

Վրաց կառավարութ. 100,000 ա. է յատկացրել Իլդուան զիւղում նաւթ արգիւնարկելու համար և գումարը դրել է ճանապարհների հարգողակցութեան նախաբարի արամազրութեան տակ:

Սանահին կայարանապետը ամսիս 20-ին ժամ 5-ին հեռագրում է երկաթուղային վարչութեան, թէ Երևանից Սանահին է հասել մի գնացք: Երբ թոյլուութիւն չունի վրաց կառավարութեան կազմից. կայարանապետը խնդրում է կար- վադրութիւն անել այս ասիլի:

Քաղաքային պարենաւորման քաժանմունքը ներկայումս գրա- ղում է արանդիսի կանոնաւոր- ման խնդրով: Այդ գործը յանձնու- լաւ է մի անձի ղեկավարութեան ներքոյ: Այս գործում քաղաքային

պարենաւորման քաթիւր համագոր- ծակցութեան մէջ է Կրասասիի պարենաւորման շիֆինսը:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺԵՏ.

Ամսիս 20-ին Հայկական Ակումբի թատրոնում, Յ. Ոսկանեանի օպե- րետային խումբը ներկայացրեց այս սեզոնում 14-րդ անգամ կոմի- կական օպերետ «Քաթա Իւանիչ»: Նախ քան բեմի բացումը պ. Ժոր- ժիկը իր ղեկավարութեամբ խմբի հետ մեծ յաջողութեամբ նուագեց աօրտիան յայտնի «Չորան», որն և արժանացաւ ժողովրդի կողմից եր- կարաւ ծափահարութեան:

Ապա սկսուեց և ներկայացումը, որը յաջողութեամբ ի կատար ածե- լաւ համար պ. ղերակատարները ա- մեն ջանք զօրծ էին դրել: Մեծ զուարճութիւն և բաւականութիւն պատճառեց աստիճանապէս պ. Քաթ- անեանը Քաթա Իւանիչի դերում, որն կրկեց «Արարի քեշիկը» կո- միկական երգը, մանաւանդ այն ժամանակ, երբ հակառակ իր ցան- կութեան բայց կոնջ ստիպմամբ և նրա սիրուն արժանանալու համար ուղում էր իր գրամարդի բանալի- ները յանձնել Սոնիչկոյին, որի ժամանակ նա հանեց վրայից 15 ժիլետ և 3 գօտի, որոնց մէջ և պահել էր նա բանալին: Յաջող էին նաև տ. տ. Նուարդ (Սոնիչկա), Յրէզ (Զա- բուարդ) պ. Շարա-Տալեան (Կոմա- վամազուի), որն կրկեց կատապոմ- ակի կոմիկական երգը: Բացի այդ երգուեցին նաև «Պանալոնի կոնտեք», «Զարուարդ ջան» և այլ երգեր: Միւս դերակատարները նպաստեցին խաղի յաջողութեանը: Այս երբորդ զործողութեան վեր- ջին բաժնում տեղի ունեցաւ բա- լետ, մասնակցութեամբ և ղեկա- վարութեամբ Յրջուեանի թաա- րոնում յայտնի պարսկ Ալեքսանի և Արուս Ոսկանեանի, որը չնայած երկու անգամ պարիւն, պարձեալ հասարակութիւնը իր երջարուտ փառանքով նորից ինչպում էր նրանց: Ի դէպ երկրորդ զործող- ութիւնը մի փոքր ժամանակով ընդհատուեց և տեղի տուեց ասեկ- ցիտի յօգուտ Բագուն ընկած հայերի, որն և շարունակուեց և ներկայացումից յետոյ: Ընդհան- րապէս խաղն անցաւ շատ աշխուժ և հասարակութիւնը մեծ բաւակա- նութեամբ և զոհ սրտով թողեց դալիքը:

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 19 հոկտ. Յուղուց «Ժողովրդի Զայն»-ի № 26-ի մէջ ղեկագում Շուշին և Արշալը խորհրդով յօդուածի որով մեղադրում են Նուբու և Յրէշի հայերին—Միութեան նախա- գահ և փոխ-նախագահ պ. պ. Ս. Շիխան և Յովսէփ Մելիք-Չհանեան մինչև օրս իրենց և կոմիտէի արած ծախսերի հաշիւները չնորոյաց- անելու, այլև ասեալով զբաղուելու մէջ, սրանով յայտնում եմ, որ պ. Ս. Շիխանի անձնական բացառ- անութիւնները և իմ ընկերներից մէկի որին անպայման հաւատում եմ հաւաստաբանները պարզում են, որ Ս. Շիխանը ասանձնապէս մտանուտք ալիքի և ցորենի առե- կաւ, Յարսիկի կողոպտիչն ալիքի ներ բեքել է, սակայն այդ միտն իր ընտանիքի և միայն իր բարե- կամ ծածկոթիքի պէտքերի համար է դիւր, որը և բաժանել է նրանց միջև: Ընդունեցէք, խնդրեմ, ջեկմ յար- գանացա հաւատարմ:

Մեք. Տէր-Յովսէփեան

Նորագույն կողմից հրատարակիչ Հայ ժողովրդական հաւասակցութիւն